

ՍՓՅՈՒՌԱՆՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔ ԺՆՅՈՒՆԻՅՈՒՆՆԵՐ ԿՅԱՆՔ ԺՆՅՈՒՆԻՅՈՒՆՆԵՐ

ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌԱՆՈՒԹՅԱՆ

(1962 թ. հունվար — հունիս)

Ֆ Ե Ր Ա Ն ՈՒ Մ

Փարիզում Ֆրանսահայ մշակութային միության գրադարան-ընթերցարանում մեծ հաջողությամբ անց է կացվել «Հայ գրքի օրեր» ցուցահանդես-վաճառքի ներկայացված են եղել բազմաթիվ գեղարվեստական, պատմա-բանասիրական, երաժշտական և այլ գրքեր, որոնք հրատարակվել են Սովետական Հայաստանում: Զգալի տեղ են գրավել նաև սփյուռքահայ հեղինակների գործերը և թարգմանական գրականությունը:

Ուղևորված գործի աննախընթաց հաջողությամբ, ցուցահանդեսի կազմակերպիչները այն տեղափոխել են Մարսելի, Լիոնի, Վալանսի, Գրենոբլի և Ալֆորվիլի հայաշատ կենտրոններ:

(«Աշխարհ», Փարիզ)

* * *

Անցյալ տարի Ֆրանսահայ երիտասարդական միության Եւրոպայի բաժանմունքը ստամբուլի թատերասերներ Քեհեյանի և Մարկյանի մասնակցությամբ կազմակերպեց «Մասիս» փոքր թատերախումբի: Երկու-երեք փոքրածավալ բեմադրություններից հետո խումբը աճեց և ճանաչում ստացավ: Նվաճա այս տարի «Մասիս» Հ. Պարոնյանի ծննդյան 120-ամյակի առթիվ բեմ հանեց «Շողոքոթթը» Պիևս Բեմադրվեց նաև Եւրոպայի հայաշատ արվարձաններում: Խումբը հրավերներ է ստացել այցելելու Փարիզ, Վալանս, Լիոն: Այդ թատերախմբի գործունեությունը կարևոր նշանակություն ունի ֆրանսահայ երիտասարդության կյանքում:

(«Քուլիս», Ստամբուլ)

* * *

Փարիզի սադիոն վերջերս հատուկ հաջողությամբ է կազմակերպել նվիրված հանձարեղ քնարերգու Գրիգոր Նարեկացու կյանքին ու

գործին: Հաջորդումը տեղի է կես ժամ: Ընթերցվել են հատվածներ Նարեկացու, Հաջորդման ընթացքում ծանոթագրություններ է տվել հայագետ Ֆրեդերիկ Ֆեյտին:

(«Աշխարհ», Փարիզ)

* * *

Ֆրանսահայ երաժշտագիտուհի Նաթալի Պասմաճյանը Ֆրանսիայի անվանի երաժշտադպրոցներից կազմված ժյուրիի առաջ շարժագրեր է իր պատրաստած «Հայ կրոնական երաժշտություն» աշխատությունը, որը բաղկացած է 200 էջից: Ժյուրին մեծ հավանություն է տվել արվեստագիտուհու աշխատանքին և որոշել է միջոցներ ձևարարել այն հրատարակելու:

(«Աշխարհ», Փարիզ)

Բ ՈՒ Ղ Ա Ր Ի Ս

Սոֆիայի «Բլագարիա» համերգային շրջադաշնում տեղի ունեցավ «Երևան» մշակութային միության Սոֆիայի մասնաճյուղի երգչախմբի տարեկան համերգը: Երգչախումբը, որը բաղկացած է 80 հոգուց, Լյուբեն Քոնդուլի ղեկավարությամբ մեծ ներշնչանքով կատարեց հայ կամպոզիտորների բազմաթիվ գործեր:

(«Երևան», Սոֆիա)

* * *

1961 թ. ձևարարված մեծ հաջողություններ համար Բուլղարիայի Կուլարովգրադ քաղաքի հայկական երգի-պարի անսամբլը ինքնագործ խմբերի ստուգատեսի հանձնաժողովի կողմից արժանացել է առաջին մրցանակի և դրամական պարգևի: Առանձնապես բարձր է գնահատվել հայկական պարերի կատարումը:

(«Նոր կյանք», Բուրգաս)

Բուլղարահայ «Երեան» մշակութային միության Վառնայի մասնաճյուղի «Ա. Շիրվանզադե» շրանշանակիր թատերախումբը բեմադրել է Ե. Սարյանի «Զրպարտութուն» պիեսը, որը մեծ հաջողություն է ունեցել: Պիեսը բեմադրվել է նաև Բուլղարիայի մյուս հայաշատ քաղաքներում:

Միաժամանակ Միության Պլովդիվի մասնաճյուղը բեմադրել է Գ. Տեր-Գրիգորյանի «Գարնան անձրև» պիեսը:

(«Երեան», Սոֆիա)

* * *

Բուլղարիայում լայն ճանաչում է ստացել Պլովդիվ քաղաքում գործող հայկական երգչախումբը, որը գոյություն ունի ավելի քան 30 տարի: Երգչախումբը այժմ կոչվում է անվանի կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի անունով: Նրա կազմը հասնում է 110 հոգու: Խումբը պարզեցանքով է «Կիրիլ և Մեֆոդի» 2-րդ աստիճանի շրանշանով, մի քանի անգամ շահել է մրցանակներ և պարգևներ: Խումբը այժմ համերգներ է տալիս Բուլղարիայի քաղաքներում:

(«Երեան», Սոֆիա)

* * *

Վերջերս Բուլղարիայի էկզի ինստիտուտի աշխատակից Ի. Գլուշկոն հաղորդում է արել Սոֆիայից ոչ հեռու Բոյանայի եկեղեցում գտնված հայկական փորագրությունների մասին: Եկեղեցին կառուցված է 1259 թ. և հայտնի է ամբողջ աշխարհում: Հայերեն արձանագրությունները, որ գտնվում են առաջին դարձի ձևի անկյունում, երևին են Նրանցից մեկը արված է 1732 թ., մյուսները թվական չունեն: Արձանագրությունները հավանաբար փորագրել են եկեղեցին այցելած Սոֆիայի հայ գաղութի անդամները:

(«Երեան», Սոֆիա)

Ռուս մի ճի ա

Բուխարեստի «Հ. Պարոնյան» թատերախումբը Մոլդևի «Ազահից» հետո այժմ բեմադրել է նրա «Ակամա բժիշկ» կատակերգությունը: Այդ առթիվ տոնվել է նաև ռումինահայ գերասան Ասատուր Հայրապետյանի բեմական գործունեության 30-ամյակը: Բազմազան տակ դերասանը հանդես է եկել հայկական դրամատուրգիայի բազմաթիվ դժվարին դերերի հաջող կատարումով:

(«Նոր կյանք», Բուխարեստ)

* * *

Ռումինահայ «Ստեփան Շահումյան» մշակութային տունը բեմադրել է Տիգրանյանի «Անուշ» օպերան, որպես նվագահանդես-ներկայացում:

Բեմադրությանը մասնակցել են «Կոմիտաս» երգչախումբը, ՌԺԽ-ի վաստակավոր դերասաններ Կարպիս Զորյանը, պետական մրցանակի լաուրեատ Դավիթ Հովհաննիսյանը, երգչուհի Արարս Սվաճյանը: Բեմադրությունը դեկտեմբեր է Արա Մանաշը:

(«Նոր կյանք», Բուխարեստ)

Երգի պատ

Երասանուհի Արարսյա Օհանյանի նախաձեռնությամբ թատերասեր կահիրեցիները բեմադրել են Սունդուկյանի գլուխ-գործոց «Պնպո» սերգախառն և հայ կյանքի քաղված թատերգությունը երեք գործողությամբ: Մամուլի վկայությամբ դերասաններին հաջողվել է հարազատությամբ վերարտադրել թիֆլիսյան կյանքի պատկերները:

(«Արարս», Ալեքսանդրիա)

* * *

Կահիրեում լույս է տեսել Մեսրոպ Գույումճյանի կազմած անգլերեն-հայերեն մեծ բառարանը: Այն կազմված է 1400 էջից և բովանդակում է բազմաթիվ նորակերտ բառեր, որոնք վերջին տարիներին են մտել գործածության մեջ և մինչև այժմ եղած բառարաններում չեն օգտագործվել: Բառարանը ունի նաև ճոխ նկարազարդում:

Մեսրոպ Գույումճյանը մինչև այս բառարանի հրատարակումը, պատրաստել և լույս էր բերել նաև հայերեն-անգլերեն բառարան:

(«Արև», Կահիրե)

* * *

Եգիպտահայ նշանավոր ծաղրանկարիչ Ալ. Մարուխանի գործերը հայտնի են շատ երկրներում: Նկարիչը ձևապատկեր է եղել իր գործերի հրատարակմանը երեք հատորով: Արդեն լույս է տեսել առաջին հատորը՝ «Մենք մեր ականջով» խորագրով, բաղկացած 220-ից ավելի էջերից: Գիրքը բաժանված է բազմաթիվ դժվարին դերերի օրտեղ զետեղված և բազմաթիվ ծաղրանկարներ հայ կյանքի ամենատարբեր բնագավառներից:

(«Արև», Կահիրե)

Լ Ի Բ ա ճ ա ճ

Բեյրութում բացվել է նշանավոր նկարիչ Աբրահամ Գուրգենյանի մանրանկարչական արժեքավոր ցուցահանդեսը: Նկարների նյութը հիմնականում վերցված է հայոց պատմության դրվագներից: Սա նկարչի երրորդ անհատական ցուցահանդեսն է: Գուրգենյանը ծրագրել է առաջիկայում այցելել Երուսաղեմ և Հնդկաստան՝ ուսումնասիրելու հայ գաղութների անցյալի արվեստի նվաճումները:

(«Արարատ», Բեյրութ)

* * *

Վերջին շրջանում զգալիորեն աշխուժացել է Հիբրանի հայկական գաղութի թատերական կյանքը: Մեկը մյուսի ետևից բեմ են հանվում հայ հնդկականների գործերը, որոնք մեծ ոգևժորություն և խանդավառություն են առաջացնում հայկական շրջաններում:

Շիրվանզադեի «Ազգային գործիչը» և Դարեգին Բեսի «Ջահել երիտասարդները» բեմադրել է Բեյրութի Հաճրնի երիտասարդաց միության թատերախումբը:

Չուխաջանի «Լեռներից» օպերան միաժամանակ երկու բեմադրություն ունեցավ: Լիրանանի թատրոնի բեմում «Վերածնունդ» միությունը Հայ երգիչների անսամբլը ներկայացրեց «Լեռներիցին», որի բեմադրողն էր Պոլսից հասուկ ժամանած ակնավոր արվեստագետ Առոտ Մաղաթյանը: Նվագախումբը և երգչախումբը ղեկավարում էր Օնիկ Ասատրյանը: Բալետի խումբը ղեկավարում էր Սոնյա Փոլատյանը: Հանդիսատեսների խնդրանքով օպերան ներկայացվեց մի քանի անգամ:

Օպերայի երկրորդ բեմադրությունը՝ «Կարինեն» (հայկական վերամշակմամբ) իրականացվեց Պերճ Ֆալլյանի, Համբարձում Բերբերյանի և Սարգիս Փասգալյանի ղեկավարությամբ: Ներկայացումը իրականացվել է Բեյրութի հայկական երգի-պարի անսամբլի և «Վահրամ Փափաղյան» թատերախմբի ուժերով:

Բեյրութի «Դասպար Իփեկյան» թատերախումբը բեմադրել է Բաֆֆու «Սևի արաղաղ» և Մարսել Պանեղի «Պղատոնի զոհ» պիեսները: Վահրամ Փափաղյան» թատերախումբը կյանք է տվել նույն Մարսել Պանեղի «Թուփագ» պիեսին:

Բեյրութի Սահակյան շրջանավարտից միությունը կազմակերպությամբ իրականացվել է Պառլյանի «Սոս և Վարդիթի» բեմականացումը, որը ներկայացվել է որպես երգախառն ողբերգություն: Բեմադրողն է հին դերասան

Կայծակ Դեդունին: Բեմադրության մեջ զբաղված սիրող դերասան-դերասանուհիները երկար և քրտնաջան աշխատանք են կատարել: Ներկայացմանը մասնակցել են նաև երիտասարդական երգի-պարի անսամբլի պարային խումբը և նվագախումբը: Ներկայացումը ջերմ ընդունելություն է արժանացել:

(«Արարատ», «Հարթոնք», Բեյրութ)

Միացյալ Կահանգներ

Վերջերս Նու-Յորքում մեծ ընդունելություն է գտել նշանավոր հրապարակախոս Շահան Սաթալիի ղեկուցությամբ, որ նա տվել է Սովետական Հայաստան կատարած այցելությունից հետո: Շահան Նաթալին, որ ծանոթ է եղել Նախասովետական Հայաստանին, մեծ ոգևորությամբ է խոսել Հայրենիքի այսօրվա նվաճումների մասին և բարձր գնահատել սովետահայ գրականությունը:

(«Պայքար», Բոստոն)

* * *

ԱՄՆ-ում լույս է տեսել նշանավոր գրող Վիլյամ Սարոյանի նոր գիրքը՝ «Կուգա կերթա՛ գլտե՛ս ուլ» խորագրով: Այս գիրքը ինքնակենսագրական մի գործ է, այն բաղկացած է 273 էջից:

(«Երկիր», Աթենք)

Դետրոյտի հայ մշակութային միության նախաձեռնությամբ տեղի է ունեցել հայկական և րաժշտահանդես՝ Դետրոյտի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ: Համերգի առաջին մասում կատարվել են ամերիկահայ կոմպոզիտորներ Ռիչարդ Յարտումյանի և Ալան Հոլմ-Հաննեսի ստեղծագործություններից: Երկրորդ մասում հնչել են Արամ խաչատրյանի դաշնամուրի կոնցերտը և հատվածներ «Դայանե» բալետից: Դաշնամուրի կոնցերտը կատարել է շնորհալի դաշնակահարուհի Մարո Աճեմյանը:

Նվագախումբը ղեկավարել է Հայկ Յաղջյանը, որի մասին վերջերս ամերիկյան թերթերը մեծ գովասանքով են խոսում: Հայկ Յաղջյանի անունը լայնորեն հայտնի է դարձել երաժշտասերներին միայն վերջերս՝ այն դեպքից հետո, երբ նա Օհայոյի նահանգում սիմֆոնիկ համերգի երկրորդ բաժնում փոխարինել է հիվանդացած դիրիժորին, որի օգնականն էր ինքը: Այդ համերգի ժամանակ նա մեծ ոգևորությամբ և համոզությամբ կատարել է Ստրավինսկու դժվարին գործերից մեկը և անմիջապես իր վրա

ուշադրություն դրավել ու բազմաթիվ հրավերներ ստացել: Հայկ Յաղջյանը մասնակցելով Անդրկովկասում կայացած դիրիժորների մրցակցությանը, չափել է առաջին մրցանակներից մեկը:

Գետրոյտում կայացած համերգը նա վարել է մեծ վարպետությամբ: Համերգին ներկա է եղել «1200-և ավելի միջազգային երաժշտասեր բազմություն մը»:

(«Ներ օր», Ֆրեզնո)

* * *

Վերջին շրջանում ամերիկահայության մեջ լայն ձանաչում է ստացել «Կոմիտաս» երգչախումբը, որի ղեկավարն է Բսահակ Արրահամյանը: Հայտնի խմբավար Գ. Սյունիի և Հ. Սամվելյանի մահից հետո ամերիկահայ երաժշտ-

ական կյանքում որոշ ժամանակ անդորր է տիրում: Սակայն «Կոմիտաս» արական երգչախումբը, որը վաղուց չէ որ կազմակերպվել է, մեծ աշխուժություն է մտցրել: Այն կազմված է երգի մոտ 90 անխոնջ մշակներից, որոնք հաճախ համերգներով հանդես են գալիս հայկական կազմակերպություններում:

Վերջերս երգչախումբը նոր ծրագրով մեծ համերգ տվեց Նյու-Յորքի «Թաուն Հոլ» դահլիճում: Կատարվեցին Կոմիտասի, Սյունիի, Ա. Պատմազյանի, Կարա-Մուրզայի, Կարո Զարյանի, Բ. Կանաչյանի, Հ. Սամվելյանի և ուրիշների գործերը: Մեներգով հանդես են եկել տեղորդ վարպետ Լևոնյանը և երգչուհի Երազմարտյանը: Համերգը վարել է Օնիկ Հեփշերը:

(«Էրարեր», Նյու-Յորք)

Վ. ԵՐԿԱՆՅԱՆ

2. ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹՈՐՈՍՅԱՆ Հ. Ն., Արևմտահայ աշխարհաբարի ծագումը և զարգացումը, [Բոստոն], Տպագր. «Պայքար»-ի, 1961, 140 էջ:

Հայերեն և ֆրանսերեն պատմական, գրականագիտական և ազգագրական զանազան հարցերի մասին մի շարք աշխատությունների հեղինակ՝ Հ. Թորոսյանի լեզվաբանական առաջին տպագիր ուսումնասիրությունն է, նվիրված արդի հայերենի ճոխացման հարցին: Գիրքը բաղկացած է 2 մասից: Առաջին մասում պատմական ակնարկի ձևով հեղինակը խոսում է դասական լեզվում պահպանված գրարարի և ժողովրդական բարբառի հետքերի մասին, հին Հայաստանի մեջ գավառաբարբառների գոյության խնդրի շուրջը, բարբառների ծագման, ինչպես նաև Կիլիկյան հայերենի պատմության վերաբերյալ: Այնուհետև Թորոսյանը համառոտակի նկարագրում է արևմտահայերենի ծագումը և աշխարհաբարի զարգացումը՝ 1800 թվականից մինչև մեր օրերը: Աշխարհաբարի զարգացման պատմությունն ամրոգացնելու նպատակով հեղինակը նմուշներ է բերում սկսած 1800 թվականից մինչև մեր օրերը: Հատվածներ են բերված Ե. Թովմաճյանից, Ղ. Ինճիճյանից, Հ. Հիսարյանից, Ղ. Ալիշանից, Հ. Սրվաճյանից, Մ. Խրիմյանից, Պ. Դուրյանից, Գ. Սրվանձույանից, Ե. Տևիրճիպաշյանից, Խ. Պերպերյանից և ուրիշներից: Երկր հե-

ղինակը հատկապես կանգ է առնում գրարարի ու աշխարհաբարի պայքարի հարցի վրա և օրինակներ է բերում գրարարական աշխարհաբարից:

Երբի երկրորդ մասում ուսումնասիրված է արդի հայերենի ճոխացման հարցը. այստեղ հեղինակը իմաստարանության, հնչաբանության, ձևախոսության մասին ընդհանուր տեղեկություններ տալուց հետո, խոսում է բառակազմության, բառերի գործածության և օտարամուտ բառերի մասին: 2-րդ մասի 5-րդ գլխում Թորոսյանը առաջարկում է օգտվել գրարարի պանծարանից՝ փոխ առնելով գունագեղ բառեր և նուրբ բացատրություններ, անշուշտ խուսափելով չափազանցություններից: Այս բաժնում Հ. Թորոսյանը բառարանի ձևով առաջարկում է շուրջ 280 գրարար բառերիցանկը (գրարարում օգտագործված օրինակներով) նախապես գրելով, որ «Մեր նպատակին հասած, և աշխարհաբարի ճոխացման նպատած պիտի ըլլան, և թե անոնց մեկ մասը գոնե մտնե լեզվին մեջ»: Գիրքը վերջանում է գավառաբարբառների հարցի շուրջը կարճ գլխով, որին կցված է նաև հայկական զանազան բարբառների մասին մինչև այժմ եղած հայերեն և օտար լեզուներով ուսումնասիրությունների ոչ լրիվ ցուցակը: Ըր ուսումնասիրության համար օգտագործած հայ և օտար հեղինակների աշխատություններից նշված է 44 աղբյուր:

ՄԱԼԵՉՅԱՆ ՎԱՀԱՆ, Հանգանակ հատրետի ֆերմավաճեցում, Հավելված՝ համակիր վկայություններ, Բեյրութ, տպարան Ատլաս, 1961 թ. 230 էջ, նկարագրող:

Երկր լույս է տեսել Վահան Մալեզյանի ծննդյան 90-ամյակի առթիվ (1871—1961): Սկզբում, ի հարգանս ծերունագարդ հորեկյարի, գետեղված է Մայր Հայրենիքի արձագանքը հորեկյարի 90-ամյակի առթիվ և Հայաստանին տրամադրած արխիվի առնչությամբ: Մալեզյանի դիմանկարից հետո տպագրված է «Խնամունամյակ» չափածո ոտանավորը, ուր գրված է՝

Մինչև հասա իմ կյանքիս հանգրվանին
այս դժվար,
կնքա ուրբան փշալի ճամբաներն
խորտուրորտ:
Հայրենիքիս սիրովը բանտին տանջանքն ալ
ճանչոա,
Բայց քնարիս երգերովն հեշտիվ կյանքին
փարեցա:

Այնուհետև գետեղված է բանաստեղծի թերթվածներից մի հատրետի (1893—1961): Բանաստեղծություններն ընտրված են «Կերուններ», «Կարապի երգը» և «Corbeille fleurie» խորագրերով լույս տեսած գրքերից և մասամբ էլ թերթերի էջերից: Գրքի երկրորդ «Հավելված» մասում տպագրված են գրական զանազան գործիչների հոդվածները, հուշերն ու մեծարանքի խոսքերը Վ. Մալեզյանի մասին, ինքնակենսագրական լրացուցիչ նյութեր և տպավորություններ, ինչպես և հայ ու օտար անվանի մարդկանց կարծիքներ, վկայություններ:

ՇԱՀՊԱՋ ՍՏԵՓԱՆ, Գրիգոր Ձոհրապ, Բեյրութ, տպարան Սեան, 1959, 383 էջ, նկարագրող:

Եզրագրական հայ փաստարանը մինչև այս աշխատության լույս ընծայումը հայտնի էր իր «Եզրագրական ազգություն» իրավագիտական աշխատությամբ (Աղեքսանդրիա, 1929), «Էրազմուսի ետև» վեպով (Աղեքսանդրիա, 1946), «Մենք՝ հայեր» ուսումնասիրությամբ (Բեյրութ, 1959), ինչպես նաև բազմաթիվ հոդվածներով, որոնք հաճախակի լույս են տեսնում սփյուռքահայ մամուլի էջերում:

Ուսումնասիրությունը բաղկացած է 11 գլուխներից: Կենսագրական ընդարձակ տեղեկություններից հետո, հեղինակը կանգ է առնում Գր. Ձոհրապի կերպարի վրա՝ առանձին գլուխներ հատկացնելով նրան (Մարդը՝ Գրի-

գոր Ձոհրապին մեջ, Գրողը, Վիպողը, Անհետացած սերունդ մը, Հրապարակագիրը և լրագրողը, Բանաստեղծը, Ուրվագծողը, Հեղափոխականը): Հետաքրքրական է «Ձոհրապին մտածումները՝ իր արվեստի գործերուն մեջ» գլուխը: Հեղինակը ուսումնասիրության առարկա է դարձրել նաև հայ և օտար ազդեցությունների հարցը՝ Գրիգոր Ձոհրապի ստեղծագործության վրա: Գրքում գետեղված են Ձոհրապի զանազան լուսանկարները:

ՔԱՍՈՒՆԻ ԵՂԻԱ, Պատմություն հին հայ գաստիարակուրյան, Բեյրութ, տպարան Սեան, 1959, 317 էջ, նկարագրող:

Պատմագիտական մի աշխատասիրություն է, գրված դասագրքի ձևով (պարզ լեզվով, հատվածների գլխակարգություններով, դյուրամաշակի ծրագրով): Հեղինակը հիմնականում ուսումնասիրում է հայ գաստիարակության պատմությունը շորորող դարից մինչև XVII դարի վերջը: Գրքը բաղկացած է նախաբանից, 23 գլուխներից և վերջաբանից: Քասունին հայ գաստիարակության պատմությունը բաժանում է երեք մեծ շրջանների. ա) հին շրջան (մեր թվարկությունից առաջ 300 թվից մինչև 1100 թվականը), բ) միջին շրջան (1100—1700) և գ) նոր շրջան (1700 թվականից մինչև մեր օրերը): Այս երկի մեջ ուսումնասիրված է հին և միջին շրջանի հայ գաստիարակության պատմությունը: Հեղինակը մանրամասն անդրադառնում է ինչպես հայ դպրոցի պատմության, այնպես էլ հայ գլխավոր ուսուցիչների կենսագրությունների վրա: Հատուկ ուշադրություն է դարձված Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Ղազար Փարպեցու, Անանիա Շիրակացու, Մովսես Խորենացու, Գրիգոր Վկայասերի, Ներսես Շնորհալու և ուրիշների կյանքի ու գործունեության վրա՝ որպես գաստիարակների:

ՇԱՄԼՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ, Փնջիկ գրական, Առաջին հատոր, Բարձր Հայքի հուշեր, պատմվածքներ, տաղեր: Նյութերը լույս տեսնում են, 1960, 270 էջ:

Ամերիկահայ հասարակական գործիչ և գրող Ա. Շամլյանի գործերի հավաքածուն է: Միհրան Սեֆերյանը այս գրքի առաջաբանում գրում է. «Արշավիր Շամլյանը մեր սփյուռքի հայության գրական մշակներն է. անիկա Ս. Հայաստանի նվիրյալ պաշտպաններն է»: Բացի չափածո և արձակ ստեղծագործություններից ուշագրավ են

հեղինակի հուշերը, որոնք ընդգրկում են 1890-ական թվականներից մինչև 1910-ական թվականները: Այստեղ կան նյութեր անցյալ դարի վերջի ինչպես առանձին ղեպերի, այնպես էլ մի շարք ղեմքերի մասին, հայ ազատագրական շարժումների, սուլթանական կառավարության հալածիչ քաղաքականության մասին, հրիմ-յան Հայրիկի մասին, Իթթիհատյան սահմանադրության վերաբերյալ և այլն: Հուշագրական բաժինը, որը գրքի մեծ ծավալն է գրողից՝ էջ 1—163, մանրամասն տեղեկություններ է պարունակում Բարձր Հայքի հայթուրքական հարաբերությունների պատմության մասին: Այնուհետև գետնի վրա ևս պատմվածքներ, տաղեր:

«Քառասնամյա հոբելանս Աշոտ Պատմագրության երաժշտական-կերական զործունեության» խմբագրեց՝ Պեպո Սիմոնյան, Եկրոյթ, տպարան Շիրակ, 1962, նկարազարդ:

1958—1960 թթ. բոլոր հայկական գաղութներում նշվեց տաղանդավոր երաժշտագետ Աշոտ Պատմագրության երաժշտական-կերական գործունեության 40-ամյա հոբելյանը: Մամուլում տպագրված հոդվածների և հոբելյանական զանազան հանդիսությունների ժամանակ արժանանալով խոսքերի ամփոփումները համա-

խմրված են այս դրքույկի մեջ, որը զաղափար է տալիս գաղութայության մեջ ներկայումս ամենից ավելի ժողովրդականություն վայելող երաժշտագետի մասին: Հրատարակված են նաև հոբելյանին ուղղված նամակներ, շնորհավորական հեռագրեր, որոնք գրվել են աշխարհի շատ մասերում ցրված հայ մշակութային, կրթական և հասարակական կազմակերպությունների և գործիչների կողմից: Հոդվածներում վեր է հանված նաև Պատմագրության դերը հայ երգի պրոպագանդան գործում: Գրքում նշվում է, որ հայաստանյան առաջին երգերը՝ հայ ժողովրդի աշխատանքի և վերածնվող կյանքի խանդավառ երգերը գաղթաշխարհում տարածվեցին Աշոտ Պատմագրության միջոցով: Առանձնապես նշվում են նրա «Դասագիրք երաժշտական գրագիտության» ինքնատիպ երկը և նրա խմբագրությամբ հրատարակված «Դանձարան հայ երգերու» վեց հատորից բաղկացած աշխատությունը: «Սույն գրքույկը, — գրում են խմբագրությունը և իրանանի հոբելյանական հանձնախումբը, — լավագույն ատաղձը կրնա ծառայել երաժշտագետին լիակատար և ամբողջական գործը, արժեքը և վաստակը սկսելու և վերլուծելու ձգտող մենագրության մը համար»: